

տայինների նախնական ձեռնարկներն են:

7. Հնագույն տեղեկություններին է Մ. Պորենացու հաղորդածը Հայոց Տիրան թագաորի Գայլատույն — ծովէն — հանած առօրի նուիրման մասին: Այսպէս է պատմւած. Արտաշէս թագաորի Արտաւազդ որդին մեռնում է անժառանգ և Տիրան թագաորը Անձեւացեաց ազգից Տրախմառուսունեով պատանդ է տալիս «գամենայն տունն Արտաւազդայն», սրան է տալիս Տառեօն աւանը, հետո էլ ազարակներ հւժիմ մի այգի, որի միջով անցնում էր — գետ առուն —, որ հանում էր Գայլատույն լճից. «եւ զայգին մեծ, յոր մտանէր առուն գետ, հանեալ ի ծովէն Գայլատուայն» (Պորենացի, Պատմ. Գիրք Երկրորդ, Գլ. 62):

Մտ. կամարական գիւղատնտեսը, ինքը Սուրմալուի գաւառից և լաւատեղեակ այդ շրջանին, բերանացի պոյոցում ինձ

(Շարունակելի) (3)

յայտնեց, որ այդ լճից արհեստական կաւէ խոյոր փողերով ջուր է բերած մինչեւ Երասխի ալ ափին գտնւած կարակալի աւերակները: Իմ հարցին, թէ արդե՞օք Գայլատույն լիճը — Բալղաղեօն արհեստական մի լիճ չէ իրենից ներկայացնում: Նա ասաց. առ տեղեան այդպիսի հարց իրեն չի տուել, բայց լաւ մտաբերելով լճի իրկարանական ջրերը, երեք կողմից բարձր լեռներով ու բլուրներով շրջափակւած, իր կերպարանքով Սեանայ լճին նման ամենացածր, գէպի արեւմուտք նայող մասում, մի դաշտավայր է ներկայացնում, որից յետոյ խոր բացւածք կայ, կարելի է կարծել և հնարաւոր է, որ գալտի մասը սկզբնաբար արհեստական կառուցւածք ունենար, դարերի կոտակուժով, աւազն աւելի իրկարոցած և ընդլայնած լինի: Նա հնարաւոր է համարում ընդունել, որ արհեստական ամբարտակ է կառուցւել:

ՄԵՍՐՈՊ ՄԱԿԻՍՏՐՈՍ ԱՐՔԵՊՍԿ.

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿԻՆ ԽՕՍՔԸ

Արեւելի մեր հայ գաղութներին.

Մի քանի օրից կը թողնենք արեւելքը՝ Եւրոպայի վրայով գէպի Ամբրիկա անցնելու համար: Ան շերմ ընդունելութիւնք, որ ունեցանք մեր գաղութների մէջ, Եւրոպայէ մի թեմերով, Ամբրիկա-Բիլբորնի և Սիւրիոյ քաղաքները, Կալիֆէ և Ալէքսանդրիա, Բաղդադ, և այն սերն ու համակրութիւնք, որ տեսնեց զգէպի Մայր Աթոռը և նորա քաղաքներու Գահակալը, զգէպի վերաշինուող հայրենիքը, հարկադրում է հրապարակաւ յայտնել խորին գոհունակութիւն և ցանկալի մի գիտացք էր Մ. Աթոռի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Նախրակի երևոյթը մեր բոլոր մեծ և փոքր գաղութներէ մէջ, անասման խանդավառութեան մի պոռթկում. որ կենդանի պայացոյցն է մեր Ժողովրդի յայրենասիր զգացմունքի և հաւատարմութեան զգէպի Ս. Էլմիաճինը, զգէպի մեր վերաշինուող պատմական և թանկագին հայրենիքը և նախնեաց ինչպէս հուր և քրտաւած ժառանգութիւնները:

Ուրախութեամբ տեսնեց Եւրոպայէ մի Աթոռի նիւթական և քարոյական գոհացուցիչ վիճակը, իր պատմական զերեկ կատարելուց զատ, ոչ պակաս կարեւոր գործունէութիւն է ծաւալում և մտաւոր լուսաւորութեան ապարիլում: ապացոյց «Սիրոյն առաքելի կանոնաւոր քրտաւարկութիւնը, Գուրեան մատենաշարքը, մրցանակարաշխութեան հաստատութիւնը հայագիտական ուսումնասիրութիւններէ համար, Գիրկայէնեան մատենադարանը փառաւոր, ժառանգաւորաց և Թարգմանչաց վարժարանները եւ միաբանութեան Ժրի գործունէութիւնը իւր աւազ եւ երիտասարդ անդամներով:

Նման տպաւորութիւն տուցանք և Անթիլիանում. զայդ կաթողիկոսների զեկաւորութեամբ կարճ ժամանակի մէջ կազմակերպուել է արդէն Լիբանանի և Սիւրիոյ հայութիւնը Եպիսկոպոսական Թեմերով, զարոցներով, և այլ հաստատութիւններով. շէնակէի և ժառանգաւորաց զարոցի հնդգհատ զարգացումը, նոր միաբանութեան սկզբնաւորութիւնը նշաններ են որ այդ անկիւնում կարգաւորեալ գործ է կատարւում ի շինութիւն և ի յառաջդիմութիւն մեր նորապալի հայութեան այդ բնկորներէ: Գր. մարմինը, շուտով իրագործուած տեսնել և Շեռլահաբը Տ. Սահակ և Տ. Բաբգէնի կաթողիկոսների ցանկութիւնը, գնեւ Անթիլիանի կալուածը որպէս մշտական սեպհականութիւն, հայ Ժողովրդի բարեպաշտական եւ ազգաբարկան նախարատութեամբ:

Եւրոպայէ մեծ և Անթիլիանում անցած մեր ժամանակը հոգեպէս կազմութեան օրեր էին մեզ համար տեսնելով կատարեալ համամտութիւն և քրտակից վերաբերմունք զգէպի Հայաստանեայց Եկեղեցին և նորա Հայրապետութեան միառնակալութեան քաղափարը և յարգանքը զգէպի Էլմիաճին Մ. Աթոռը և նորա Գահակալը:

Յատկան Ատուածոյ և մեր ընդհանրական Սրբազնազոյնի կաթողիկոսի օրհնում ենք մեր բոլոր Ժողովուրդը և յարգորում մնալ հաստատ կրօնի և հայրենի աւանգութիւններէ մէջ, լինել լաւ գորացնել և պարտաւանալ քաղաքացիներ հիւրընկալող ազգերի և պետութիւններէ մէջ, շնանալութեամբ եւ պատուաւոր կենցաղով բարձր պահելով հայ Ժողովրդի անունը:

ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԵ ԵՒ ՊԱՏՈՒԻՐԱԿ

Ա. ԿԱԹՈՒԿՈՍԱՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՊԱՐԵՆԻՆԻ, ԱՐՔԵՊԻՍԿՈՍ

Գաղիթ, 5 Մարտ 1936

